ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Անդրազգային այս կամ այն կազմակերպությունն ընտրելիս մեծ նշանակություն ունի քաղաքակրթական բաղկացուցիչը, որը դեր խաղաց նաև Հայաստանի եվրասիական ընտրության հարցում: Նախ և առաջ պետք է սահմանել, թե ինչ է քաղաքակրթությունը: «Քաղաքակրթություն» հասկացությունը գիտական գրականության մեջ և ԶԼՄ-ներում օգտագործվում է երկու առումով՝ «համաշխարհային քաղաքակրթություն» և այսպես կոչված «լոկալ քաղաքակրթություն»: Սա շատ կարևոր է նաև եվրասիական ինտեգրման շուրջ առկա խնդիրների համատեքստում, քանի որ հետխորհրդային հանրապետությունների համար իրենց սոցիոմշակութային, քաղաքակրթական ինքնության վերականգնումը և ապահովումը ավելի մեծ նշանակություն ունեն, քան ինտեգրացիոն գործընթացները տնտեսության ոլորտում: Տնտեսական օգուտը հաճախ անարդյունք է լինում, երբ այս կամ այն ժողովուրդը և պետությունները քաղաքակրթական առումով հեռանում են իրարից[1]:

2017թ. բոլոր առաջատար սուբյեկտությունների[2] (ԱՄՆ, Չինաստան, ԵՄ և ԵԱՏՄ) համար վճռորոշ էր: Ակնհայտ է, որ նոր բևեռ են դառնալու այն սուբյեկտությունները, որոնք ունեն տնտեսական, ժողովրդագրական, մշակութային ներուժ և մեծ տարածք: Կարող ենք փաստել՝ խոսքը 5-6 առաջատար ենթագլոբալ քաղաքակրթությունների մասին է: Այսինքն՝ դոլարի, եվրոյի, յուանի, յենի և ռուբլու գոտիները ենթադրաբար պետք է համընկնեն այդ ենթագլոբալ քաղաքակրթությունների սահմանների հետ: Սա նշանակում է, որ եվրասիական քաղաքակրթության սահմանները ևս մոտ ապագայում պետք է համընկնեն եվրասիական արժույթի գործունեության գոտիների հետ:

Այսօր հետխորհրդային հանրապետությունների համար իրենց արտաքին և ներքին քաղաքականությունը իրականացնելիս կարևոր հասկացություն է դարձել «ազգային շահը»: Միաժամանակ պետք է հստակ գիտակցել, թե ինչ իմաստով է այն ներկայացվում, և թե ինչպես

---

[1] Տե՛ս **Баласанян Г.** Предпосылки и цивилизационные основания евразийства и интеграционных процессов в пространстве Евразии // http://soyuzinfo.am/rus/analitics/detail.php?ELEMENT_ID=2158&sphrase_id=1606 (մուտքը՝ 18.08.2017):

[2] Սուբյեկտ լինելու հատկություն:

ընդունված որոշումներում հստակ տարանջատել ազգայինը, ապազգայինը և կեղծ ազգայինը[3]:

Այս ամենը պետք է իմանալ, որպեսզի ինտեգրացիոն գործընթացների ժամանակ կարողանանք հստակ պատկերացում կազմել ազգայինի և միջազգայինի մասին, և որ ամենակարևորն է՝ թե ինչով են սրանք տարբերվում քաղաքակրթականից: Հիմնվելով այս ամենի վրա, կարելի է տալ քաղաքակրթականի սահմանումը: Ըստ էության քաղաքակրթականը միջազգային շահ է, որը համապատասխանում է ազգայինին: Հետևաբար՝ հայկականը, ռուսականը, բելառուսականը ազգային են, իսկ եվրասիականը՝ քաղաքակրթական:

Մյուս կողմից եվրաինտեգրացիան կամ հետխորհրդային պետությունների նախընտրած ինտեգրացիոն ցանկացած ուղղություն ձևով միջազգային է, բնույթով՝ ապազգային, քանզի խոսքը նախկին քաղաքակրթության սահմաններից դուրս գալու մասին է: Իսկ երկու քաղաքակրթություններում միաժամանակ գտնվել սկզբունքորեն անհնար է:

Հետխորհրդային տարածքում տնտեսական, քաղաքական և այլ ոլորտներում միջպետական ինտեգրացիոն գործընթացը իրավաստեղծման առումով բոլորովին նոր է, որը ԽՍՀՄ փլուզումից հետո ձևավորվել է զրոյից, եթե հաշվի չառնենք Եվրոպական միության իրավական բազան, որը դարձել է յուրօրինակ «մոդելային շարք» Եվրասիական Տնտեսական միության համար[4]:

ԱՊՀ-ի, ԵԱՏՄ-ի, Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի մաքսային միության հիմնումը հետխորհրդային երկրներին հնարավորություն տվեց ձեռնամուխ լինելու հետևյալ խնդիրների կարգավորմանը՝ համաժամանակացնել իրավաստեղծման գործընթացը, որոշել ազգային իրավասության սահմանները, սկսել նոր (եվրասիական) իրավական դաշտի ձևավորումը, այսինքն՝ որոշել եվրասիական իրավասության սահմանները: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում եվրասիական ինտեգրացիայի պայմանագրային բազան և միասնական տնտեսական տարածքի ձևավորումը: Մինչև Մաքսային միության ձևավորումը ինտեգրացիոն գործընթացների մասնակիցների միջև ստորագրված պայմանագրերը հռչակագրային բնույթ ունեին:

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը ուժի մեջ մտավ 2015 թ. հունվարի 1-ից: Այդ պահից սկսած՝ եվրասիական ինտեգրացիայի պայմանագրային բազայի կատարելագործմանն ուղղված աշխատանքը ոչ միայն շարունակվեց, այլև նոր որակ ստացավ:

---

[3] Տե՛ս **Баласанян Г.,** նշվ. աշխ.:

[4] Տե՛ս **Баласанян Г.** Развитие и укрепление нормативно-правовой базы евразийской экономической интеграции. Гармонизация национальных правовых систем // http://soyuzinfo. am/rus/analitics/detail.php?ELEMENT_ID=2200&sphrase_id=1606 (մուտքը՝ 18.08.2017):

Փորձագետների կարծիքով, եվրասիական իրավական տարածքի ձևավորումը սկսվեց ԱՊՀ ստեղծման մասին պայմանագրի ստորագրմամբ, այսինքն՝ կարող ենք նշել, որ խորհրդային իրավական դաշտի ամբողջական փլուզում տեղի չունեցավ[5]:

Տնտեսական ինտեգրացիայից բացի, ԱՊՀ երկրների առաջնորդների առջև ծագեց կոլեկտիվ անվտանգության ապահովման հարցը: Այստեղ մենք գործ ունենք ոչ տնտեսական ոլորտում եվրասիական իրավական դաշտի ձևավորման հետ: 1992 թ. մայիսի 15-ին ստորագրված կոլեկտիվ անվտանգության մասին պայմանագրում արտացոլված են այն նույն սկզբունքները, որոնք առկա են նաև եվրասիական այլ մարմինների ստեղծման պայմանագրերում: Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում առաջնորդվում է միջպետական և միջազգային տարբեր պայմանագրերով, որոնք ոչ միայն նրա գործունեության իրավական բազան են, այլև տարածաշրջանային (եվրասիական) կոլեկտիվ անվտանգության քաղաքական-իրավական հիմքը[6]:

Անվտանգության հարցը վճռորոշ էր Հայաստանի համար Եվրասիական տնտեսական միության օգտին ընտրություն կատարելու հարցում:

ՀԱՊԿ-ն, ի տարբերություն ՆԱՏՕ-ի, չի պարտադրում անդամակցել կազմակերպությանը և չի «ցուցադրում մկաններ»: Այն եվրասիական տարածքում հավաքական անվտանգության ապահովման հիմնական ձևաչափն է, որը իրականացվում է գործընկերների, դաշնակիցների և ընդդիմախոսների հետ պայմանավորվածությունների և ՀԱՊԿ ստեղծման մասին պայմանագրի շրջանակներից դուրս մասնակիցների ռազմավարական շահերը հաշվի առնելով:

Պայմանավորվածությունների և պարտավորությունների հստակ կատարումը նպաստում է, որ ՀԱՊԿ-ն ամբողջ Եվրասիայում վերածվի անվտանգության ապահովման հիմնական կառույցի, բացի այդ, այն դարձել է ԱՊՀ-ի, ԵԱՏՄ-ի, ՇՀԿ[7]-ի միջև համագործակցության միասնական համակարգի միջուկ[8]:

ՀԱՊԿ-ի ներկայացուցիչները բազմիցս հանդես են եկել անվտանգության հարցերով Եվրասիական համակարգող խորհուրդ ստեղծելու առաջարկությամբ, որը Եվրասիայի տարածքում արդի մարտահրավերների և սպառնալիքների (ահաբեկչության և ծայրահեղականության, թմրանյութերի շրջանառության, մարդկանց ապօրինի միգրացիայի) դեմ պայքարում համակարգողի դեր կատարեր:

Առանձնահատուկ նշանակություն ունի արժութային միությունը, որը կարգավորվում է «Եվրասիական տնտեսական միության մասին»

---

[5] Տե՛ս նույն տեղը:

[6] Տե՛ս «Договор о коллективной безопасности от 15 мая 1992 года» http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=126 (մուտքը՝ 18.08.2017):

[7] Շանհայի համագործակցության կազմակերպություն:

[8] Տե՛ս **Баласанян Г.** Развитие и укрепление нормативно-правовой базы евразийской экономической интеграции. Гармонизация национальных правовых систем:

պայմանագրի 64-րդ հոդվածով: Այն եվրասիական միասնական տնտեսական տարածքի զարգացման հեռանկար է, սակայն այս կամ այն եվրասիական արժույթը (ռուբլի, ալթըն կամ եվրազ) ընդունելու որոշումը կայացնելու են վերազգային ֆինանսական առաջատար կառույցները[9]:

Եվրասիական ինտեգրացիայի համար կարևոր իրադարձություն էր ԵԱՏՄ անդամ երկրների ղեկավարների կողմից 2015 թ. մայիսի 8-ին բեռնափոխադրումների փուլային ազատականացման մասին ծրագրի ընդունումը, համաձայն որի՝ միության որևէ երկրում գրանցված բեռնափոխադրողները 2016-2025 թթ. միության ողջ տարածքում կարող են գործունեություն ծավալել առանց որևէ խոչընդոտի[10]:

Սրանք են եվրասիական ինտեգրացիոն գործընթացի հիմնական առավելությունները, և այն դարձել է Հայաստանի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը:

2013 թ. բախտորոշ էր Հայաստանի համար: Երկիրը ուներ զարգացման երկու հնարավոր ուղղություն: Կա՛մ հետևել որոշ հետխորհրդային հանրապետությունների օրինակին և ստորագրել ԵՄ հետ ասոցացման մասին պայմանագիրը, կա՛մ էլ առաջնորդվելով արտաքին քաղաքականության և տնտեսական շահերով ու ազգային անվտանգության պահպանման կարևորությամբ՝ ստորագրել Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի հետ Մաքսային միություն մտնելու մասին պայմանագիրը: Հայաստանն ընտրեց երկրորդ ճանապարհը, և 2013 թ. սեպտեմբերի 3-ին Մոսկվայում ՌԴ նախագահ Վ. Պուտինի հետ հանդիպման ժամանակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց, որ Հայաստանը ցանկանում է մտնել Մաքսային միություն:

Դեռևս 2013 թ. հուլիսին Հայաստանը և ԵՄ-ն ստորագրել էին ազատ առևտրի համապարփակ և ընդգրկուն գոտի ստեղծելու մասին համաձայնագիրը, և քչերն էին հավատում, որ Հայաստանը կհրաժարվի այս բանակցություններից և քայլեր կձեռնարկի Մաքսային միության հետ հարաբերությունները խորացնելու ուղղությամբ:

Պետք է նշել, որ ՀՀ նախագահի հայտարարությունը միանշանակ չընդունվեց թե՛ երկրի ներսում և թե՛ դրսում: Հասարակության կարծիքը փաստացի բաժանվեց երկու ոչ հավասար մասի: Հայաստանի հասարակության մեծ մասն աջակցեց նախագահի հայտարարությանը: Սա ուներ իր պատճառները: Տնտեսական, մշակութային, հոգևոր կապեր ԵԱՏՄ անդամ երկրների, հատկապես՝ Ռուսաստանի հետ: Վեր-

---

[9] Տե՛ս «Договор о Евразийском экономическом союзе» // https://docs. eaeunion.org/docs/ ru-ru/0003610/itia_05062014 (մուտքը՝ 18.08.2017):

[10] Տե՛ս «Решение Высшего Евразийского экономического совета от 8 мая 2015 года № 13 о программе поэтапной либерализации выполнения перевозчиками, зарегистрированными на территории одного из государств-членов Евразийского экономического союза, автомобильных перевозок грузов между пунктами, расположенными на территории другого государства-члена Евразийского экономического союза, на период с 2016 по 2025 годы» // http://online.adviser.kg/Document/?doc_id=35589040 (մուտքը՝ 18.08.2017):

ջինս Հայաստանի գլխավոր առևտրատնտեսական գործընկերն է: Հայաստանի ազգաբնակչության գերակշիռ մասը բարեկամներ ունի Ռուսաստանում, և յուրաքանչյուր ամիս Ռուսաստանից Հայաստան են փոխանցվում զգալի չափով գումարներ: Եվրասիական շուկան շատ կարևոր է Հայաստանի համար, քանի որ մեր արտադրանքը շուրջ 100 տարի ծանոթ է եվրասիական սպառողին: Մենք ծանոթ ենք արևելաեվրոպական երկրների դառը փորձին, որոնք ԵՄ հետ ասոցացման պայմանագիր ստորագրելու պահին ԵՄ շուկա ավելի քան 20 անուն ապրանք արտահանելու իրավունք էին ստացել, սակայն ընդամենը մեկ տարի անց տարբեր պատճառաբանություններով այդ ապրանքների ցուցակը կրճատվել էր մոտ 10 անգամ: Մեզ ծանոթ է նաև որոշ հետխորհրդային երկրների (Ուկրաինա, Մոլդովա) դառը փորձը, որոնք ստորագրեցին նմանատիպ պայմանագիր, սակայն շուտով պարզվեց, որ նրանց արտադրանքը Եվրոպան չի ընդունելու: Մերժում էին այն հիմնավորմամբ, որ այդ արտադրանքը չի համապատասխանում եվրոպական չափանիշներին[11]:

Հայ հասարակության փոքր մասը և եվրոպական կողմնորոշում ունեցող որոշ քաղաքական ուժեր դեմ արտահայտվեցին ՀՀ նախագահի որոշմանը: Դա հասկանալի է, քանի որ մի քանի կուսակցություններ և բազմաթիվ հասարակական կազմակերպություններ ֆինանսավորվում են Արևմուտքից և հետևաբար շահագրգռված են, որ Հայաստանն ընտրի զարգացման եվրոպական ուղին:

Հայաստանի իշխանությունները շարունակեցին բանակցությունները ԵՄ-ի հետ համապարփակ և ընդգրկուն համաձայնագիր ստորագրելու ուղղությամբ՝ կարծես փորձելով ապացուցել, որ հնարավոր է կյանքի կոչել արտաքին քաղաքականության և՛, և՛-ի սկզբունքը. ստորագրել համաձայնագիր ԵՄ-ի հետ՝ լինելով Եվրասիական տնտեսական միության անդամ: Պայմանագիրը ստորագրվեց Բրյուսելում՝ 2017 թ. նոյեմբերի 24-ին[12]:

Նշենք, որ դեռևս 2013 թ. ՀՀ-ի և ԵՄ-ի միջև պետք է ստորագրվեր նմանատիպ պայմանագիր: Սակայն ՀՀ-ի՝ Մաքսային միություն մտնելու որոշումից հետո ԵՄ-ի հետ պայմանագիրը չստորագրվեց: Եվ ահա, չստորագրելու պատճառների մասին իր ելույթում որոշ մանրամասներ ներկայացրեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ով 2018 թ. փետրվարի 17-ին մասնակցում էր Մյունխենում ընթացող միջազգային համաժողովին: Նախագահի խոսքերով՝ ոչ թե ՀՀ-ն է հրաժարվել ստորագրել այդ

---

[11] Տե՛ս **Баласанян Г.** Армения и евразийская интеграция: уроки, проблемы и перспективы // "Евразийская интеграция: проблемы и перспективы". Сб. материалов круглого стола в рамках Международной школы молодых политологов «Интеграционные процессы на постсоветском пространстве: проблемы и перспективы». М., 2017, էջ 8:

[12] Տե՛ս «Ստորագրվեց Հայաստան - Եվրամիություն Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը», http://mfa.am/hy/press-releases/item/2017/11/24/cepa _signing/ (մուտքը՝ 22.02.2018):

պայմանագիրը, այլ ԵՄ-ն չի ցանկացել ստորագրել այն՝ պատճառաբանելով, թե հնարավոր չէ միաժամանակ լինել Մաքսային միության անդամ և ասոցացման պայմանագիր ստորագրել ԵՄ-ի հետ[13]: Սակայն կյանքը ցույց տվեց, որ քաղաքական կամքի առկայության պայմաններում ստորագրելն իրոք հնարավոր է:

2017 թ. նոյեմբերին ՀՀ-ի և ԵՄ-ի միջև ստորագրված համապարփակ համաձայնագրին անդրադարձել է նաև ՌԴ Դաշնային խորհրդի միջազգային հարցերի կոմիտեի նախագահ Կոնստանտին Կոսաչևը, ով նույնպես մասնակցում էր մյունխենյան համաժողովին: Նրա կարծիքով, Հայաստանը ցույց տվեց, որ հնարավոր է հաջողությամբ իրականացնել և՛, և՛-ի քաղաքականությունը[14]:

Հայաստանի մուտքը Եվրասիական տնտեսական միություն համընկավ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետ, և, ինչպես ԵԱՏՄ մյուս երկրներում, Հայաստանում ևս նկատվեց տնտեսական անկում: Սակայն արդեն 2016 թ. Հայաստանը տարին փակեց տնտեսական աճի դրական ցուցանիշներով[15]: Դրական դինամիկան շարունակվեց նաև 2017 թ.: Հունվար-դեկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ տնտեսական ակտիվության ցուցանիշը ավելացել է 7.7 տոկոսով[16]:

ՀՀ-ի անդամակցությունը ԵԱՏՄ-ին մեր երկրին հնարավորություն տվեց օգտվելու էժան էներգակիրներից: Այսօր Հայաստանը Ռուսաստանից ստացվող գազի համար վճարում է 150 ԱՄՆ դոլար 1 խմ համար: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Ուկրաինան և Մոլդովան վճարում են մոտ 3 անգամ ավելի թանկ[17]:

Հայաստանի ընտրությունը հասկանում են նաև եվրոպացիները: Chatham House-ի՝ Ռուսաստանի և Եվրասիայի հարցերով դեպարտամենտի ղեկավար Ջեյմս Նիքսիի կարծիքով՝ արևմտյան փորձագիտական շրջանակներում կարևորում են ինտեգրացիոն վեկտորների և «կա՛մ-կա՛մ» սկզբունքի կապը երկրի քաղաքական համակարգի էվոլյուցիայի հետ: Բացի այդ, ըստ նրա, ասոցացման համաձայնագիրը պահանջում է քաղաքական և տնտեսական կարևոր բարեփոխումների իրականացում: Մինչդեռ Ռուսաստանը և Մաքսային միությունը նման

---

[13] Տե՛ս «ՀՀ նախագահը Մյունխենում ադեկվատ գնահատական հնչեցրեց Թուրքիայի ղեկավարության հասցեին. քաղաքագետ», https://www.panorama.am/am/ news/2018/02/20/ Մյունխեն-Թուրքիա/1908454 (մուտքը 22.02.2018):

[14] Տե՛ս «Հայաստանի փորձը լավագույնն է. ԵՄ-ի «կա՛մ-կա՛մ» դիրքորոշումը մասնատեց Ուկրաինան», Կոսաչև, http://armtimes.com/hy/article/131629 (մուտքը՝ 22.02.2018):

[15] Տե՛ս **Манасерян Т.** Экономика Армении в 2016 г: тенденции и итоги // http:// soyuz-info.am/rus/analitics/detail.php?ELEMENT_ID=2137 (մուտք՝ 18.08.2017):

[16] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թ. հունվար-դեկտեմբերին» www.armstat.am/am/?nid=157&id=582 (մուտքը՝ 22.02.2018):

[17] Տե՛ս **Баласанян Г.** Армения и евразийская интеграция: уроки, проблемы и перспективы, էջ 10:

պահանջներ չեն ներկայացնում, և մուտքն այդ կազմակերպություն պայմանավորված չէ բարեփոխումներով և երկրում դեմոկրատիայի զարգացմամբ[18]:

Բավականին հետաքրքիր են նաև հայ փորձագետների, եվրասիական ինտեգրացիայի կողմնակիցների և ընդդիմախոսների կարծիքները: Առաջին խումբը, ի դեմս եվրասիական ինտեգրացիայի, տեսնում է արտահանման հնարավորությունների աճ: Քաղաքական վերլուծաբան, եվրասիական փորձագիտական ակումբի համակարգող Արամ Սաֆարյանի կարծիքով՝ ԵԱՏՄ-ի և ՀԱՊԿ-ի պայմաններում Հայաստանը հայացքը նախ և առաջ հառում է դեպի Ռուսաստան, և 2016 թ. «նույնիսկ ամենավատ տնտեսական կոնյունկտուրայի պայմաններում Հայաստանից Ռուսաստան արտահանումը երկնիշ թվով աճել է և կազմել պատմական մաքսիմում»[19]: Քաղաքական վերլուծաբանի կարծիքով՝ Հայաստան-Իրան սահմանին ազատ տնտեսական գոտու գործարկմանը Եվրասիական տնտեսական միությունում դրական են վերաբերվում, քանի որ տվյալ պարագայում Իրանի և Հայաստանի ու Ռուսաստանի տնտեսական շահերը համընկնում են:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ Հայաստանի ինտեգրացիան Եվրասիական տնտեսական միությանը հեռանկարային է: Երկիրը աստիճանաբար զարգացնում է տնտեսությունը, դարձել է գրավիչ: Վրաստանը, Իրանը այսօր ծրագրում են նաև Հայաստանի տարածքով դուրս գալ եվրասիական շուկա: Ակտիվացել է նաև Հայաստանի դիվանագիտությունը, որը իր ռուս գործընկերների հետ ակտիվ աշխատում է Վրաստանով Հայաստանից Ռուսաստան երկրորդ ցամաքային ճանապարհ բացելու ուղղությամբ:

Բանալի բառեր - *քաղաքակրթություն, քաղաքականություն, տնտեսություն, եվրասիական տնտեսական միություն, անվտանգություն, հետխորհրդային տարածք, ազգային շահեր*

ГРИГОР БАЛАСАНЯН – *Цивилизационная и политико-экономическая основа евразийского выбора Армении.* – 2013 год оказался для Армении судьбоносным. Перед ней лежали два пути развития. Вслед за некоторыми постсоветскими странами подписать Договор об ассоциации с ЕС или же, акцентируя экономические аспекты внешней политики и вопросы национальной безопасности, войти в Таможенный союз России, Казахстана и Белорусии? Армения выбрала второй вариант, о чём 3 сентября, после встречи с В. Путиным, объявил С. Саргсян.

Это заявление вызвало недовольство как внутри страны, так и за рубежом. Общественное мнение разделилось. Но б*о*льшая часть общества, принимая во внимание экономические, гуманитарные и духовные связи Армении с Россией и странами ЕАЭС, поддержала решение президента. Исходя из постепенного подъ-

---

[18] Տե՛ս **Никси Дж.** Евроинтеграция – это гораздо более трудный путь для властей Армении // URL, http://www.armenianreport.com/pubs/65118/ (մուտքը՝ 18.08.2017):

[19] **Ա. Սաֆարյան,** Քաղաքատնտեսական ռեվյու – 2017, http://soyuzinfo.am/arm/analitics/detail.php?ELEMENT_ID=2139 (Մուտքը՝ 18.08.2017):

ёма армянской экономики, можно с уверенностью сказать, что евразийская интеграция открывает перед Арменией хорошие перспективы.

Ключевые слова: *цивлизация, политика, экономика, Евразийский союз, безопасность, постсоветское пространство, национальные интересы*

GRIGOR BALASANYAN – *The Civilization and Political-Economic Basis of the Eurasian Choice of Armenia.* – The year 2013 was crucial for Armenia. It had two choices for development – either to act as some post-Soviet republics did and to sign the European Union Association Agreement, or taking into consideration the political, economic aspects of foreign policy and the problems of national security, to sign the agreement with Russia, Kazakhstan and Belarus in order to join the Customs union. Armenia chose the second way of development, as well as during the Armenian president's visit to Russia, on 3 September 2013 it was announced that Armenia is going to join the Customs union. This decision divided the country into two unequal parts, the bigger of which accepted the president's decision. It is an important point to be made that there are good prospects of the Eurasian integration for Armenia. The economy is rising and is getting more attractive for its neighbors. It means that it was a right decision to join the Eurasian economic union.

Key words: *civilization, policy, economy, Eurasian Union, security, post-Soviet territory, national interests*